

գութեանն, եւ խօսէր ընդ նմա երբեմն ի պատճառս իմաստութեան եւ երբեմն ի պատճառս հաւատոյ եւ լսէր զպատասխանիս Վարդապետին՝ ախորժ եւ համեղ եւ լի շնորհօքն Աստուծոյ. եւ վասն պարկեշտ վարուց նորա սիրեաց զնա» (Դաւր. 294) :

Երեւանի հիւսիսային կողմը, այգեստաններու մէջ կար հին ժամանակներէ ի վեր մատուռ մը «ի վերայ դամբարանի սրբոյ առաքելոյն Անանիայի», որ աւերակ էր եւ անմարդաբնակ: Խանը ինքնաբերաբար առաջարկեց Վարդապետին, որ նորոգէ զայն, չինէ չուրջը խցիկներ եւ այլ կարեւոր շինուածքներ եւ հաստատէ հոն իւր բնակութիւնը. «Արդ լուր ինձ եւ մի զնար յայլ աշխարհ, այլ արա զսաքեղ բնակութիւն եւ դադարեա աստէն, զի իրերաց մերձակայութեամբ եւ տեսութեամբ մխիթարեսցուք»: Նոյնպէս կ'աղաչէին նաեւ քաղաքացիներն եւ վաճառականները: Առաջարկութեան կը հաւանի վարդապետը եւ կը ձեռնարկէ նպատատարութեամբ ժողովրդեան եւ վաճառականներու նորոգել եկեղեցին եւ չինել առընթեր «խուցեր, ժամատուն, սարաւութ եւ զայլ տունս յոլով» եւ չուրջանակի պարիսպ: «Եւ կատարեալ դամենայն շինուածսն՝ բնակեցաւ անդէն վարդապետն իւրովք միաբանօքն՝ կարգաւն եւ սահմանաւն այն, զոր կարգեցին ի մեծ Անապատն: Առ որ ժողովեցան միաբանք բազումք, միայնակեացք եւ գրոց